# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

« 30 » հունվարի 2020 թվականի N: 32-Ա ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 9-րդ կետի 10-րդ ենթակետի դրույթով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 1 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

*Հավելված*

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի*

*2020 թվականի հունվարի 30 ի*

*N 32 - Ա որոշման*

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի 24. 01. 2020 թ.

ԿԱՅԱՑԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-ԻՆ

| | |
|---|---|
| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ | Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ |
| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ | Հ. ՄԱԹՈՍՅԱՆԻ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ | Խ. ԽՆԶՐՑՅԱՆԻ |
| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ |
| | Ա. ՄԱՄՅԱՆԻ |

Նիստին չեն մասնակցել հանձնաժողովի անդամներ՝ Ա. Անտիկյանը և Գ. Բաղդասարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի խնդրանքը Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղին ընկերության կողմից ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու և երթուղին սպասարկող ԳԱԶ- 32213 մակնիշի 34 NO 084 համարանիշի միկրոավտոբուսը համարժեք այլ ԳԱԶ – 322132-220 մակնիշի 735 OP 61 համարանիշի միկրոավտոբուսով փոխարինելու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

2. Լ Ս Ե Ց Ի Ն . - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի

խնդրանքը Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղին ընկերության կողմից ժամանակավոր սպասարկման թույլտվություն տալու և երթուղին սպասարկող ԳԱԶ- 32213 մակնիշի 34 NO 084 համարանիշի միկրոավտոբուսը համարժեք այլ ԳԱԶ – 322132-220 մակնիշի 735 OP 61 համարանիշի միկրոավտոբուսով փոխարինելու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

Զեկուցողը նշեց, որ <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իր կողմից սպասարկվող Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղու փոխարինվող միկրոավտոբուսը սահմանված ժամկետում ներկայացրել է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը և Ընկերության տնօրենը խնդրել է նաև թույլատրել ժամանակավորապես՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած միկրոավտոբուսներով սպասարկելու մասին:

<u>Հանձնաժողովի նախագահ Վ. Գրիգորյանը առաջարկեց՝</u>

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 69-րդ, 70-րդ և 71-րդ կետերի պահանջներով թույլատրել <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը իր կողմից սպասարկվող Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ- 32213 մակնիշի 34 NO 084 /գնահատականը՝ 73,0-10%=65,7 միավոր/ համարանիշի միկրոավտոբուսը փոխարինելու համարժեք այլ ԳԱԶ – 322132-220 մակնիշի 735 OP 61 համարանիշի միկրոավտոբուսով /գնահատականը՝ 74,8 միավոր/ և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի

պահանջով թույլատրել <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ժամանակավորապես՝ մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը, բայց ոչ ավելի քան մինչև նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը, սպասարկելու Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղին:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

<u>ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ</u>

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 69-րդ, 70-րդ և 71-րդ կետերի պահանջներով հանձնաժողովը որոշեց թույլատրել << Տրանս Ակնթարթ >> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իր կողմից սպասարկվող Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ- 32213 մակնիշի 34 NO 084 /գնահատականը՝ 73,0-10%=65,7 միավոր/ համարանիշի միկրոավտոբուսը փոխարինելու համարժեք այլ ԳԱԶ – 322132-220 մակնիշի 735 OP 61 համարանիշի միկրոավտոբուսով /գնահատականը՝ 74,8 միավոր/ և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 62-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով թույլատրել <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված կազմակերպություն, լիազորելու ժամանակավորապես սպասարկելու Գյումրի- Գետք- Երազգավորս-Բայանդուր և հետադարձ /N 07-002/ միկրոավտոբուսային երթուղին նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած միկրոավտոբուսներով և սպասարկման ժամկետ սահմանել մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը, բայց ոչ ավելի քան մինչև նոր մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը:

Առաջարկությունը քվեարկությամբ ընդունվել է՝ միաձայն:

3. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 10-րդ ենթակետի, սույն արձանագրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գրիգորյան

անդամներ՝ Հ. Մաթոսյան

Ա. Մարգարյան

Ա. Մամյան

քարտուղար՝ Խ.Խնձրցյան